Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 311 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԿԱՆԱՉ ԱՆԱՍՆԱԿԵՐԻ ԱՃԵՑՄԱՆ ՀԻԴՐՈՊՈՆԻԿ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Բարելավել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի Ներքին Խնձորեսկ բնակավայրի տնային տնտեսությունների և ֆերմերների սոցիալական վիճակը՝ նպաստելով անասնապահության զարգացմանը և գյուղատնտեսության մեջ տեխնոլոգիաների ներդրմանը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Կարմիր խաչի միջազգային կոմիտե
4.	Ծրագիրը կատարողը	«Տարոն» երիտասարդական զարգացման հասարակական կազմակերպություն (Հայաստանի Հանրապետություն, Սյունիքի մարզ, Գորիս համայնք, Ներքին Խնձորեսկ բնակավայր, 7-րդ փողոց, տուն 7, ՀՎՀՀ՝ 09215994)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, Սյունիքի մարզ, Գորիս համայնք, Ներքին Խնձորեսկ բնակավայր, բագավառը՝ գյուղատնտեսություն
6.	Ծրագրի բյուջեն	3,000,000 դրամ
7.	Բարեգործությունն ստացողը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի Ներքին Խնձորեսկ բնակավայրի տնային տնտեսություններ և ֆերմերներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի մայիսի 10-ից մինչև 2023 թվականի հուլիսի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Կանաչ անասնակերի աճեցման հիդրոպոնիկ համակարգի ներդրում՝ 3,000,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի մայիսի 10-ից մինչև 2023 թվականի հուլիսի 30-ը:

10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Երեք արտադրական պահարանով կանաչ զանգվածի արտադրության հիդրոպոնիկ ԱԵՈՆ համակարգի ձեռքբերում և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 3,000,000 դրամ արժողությամբ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Չեն նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով բարեգործության ոլորտը համակարգող լիազորված մարմնին կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

04.05.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ